Հայտարարություն

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի հրապարակային առաջարկի մասին

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի ազդագիրը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գրանցվել է 2011թ-ի օգոստոսի 30-ին /հիմք՝ ՀՀ ԿԲ նախագահի 30.08.2011 թ-ի թիվ 1/972Ա որոշում/, որի համաձայն առաջարկվում է տեղաբաշխել Ընկերության հասարակ անվանական բաժնետոմսեր հետևյալ պայմաններով՝

- Քանակ 3,673,926 հատ
- Տեղաբաշխման գին՝ 1,110 ՀՀ դրամ:

Բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է Ընկերության բաժնետերերի կողմից բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքի կիրառման միջոցով, որից օգտվելու համար անհրաժեշտ է մինչև հոկտեմբերի 3-ը Ընկերությանը ներկայացնել բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքից օգտվելու մասին գրավոր ծանուցում:

Նախապատվության իրավունքի կիրառման շրջանակներում չտեղաբաշխված բաժնետոմսերը տեղաբաշխվելու են ազատ բաժանորդագրության միջոցով, որը կսկսվի հոկտեմբերի 4-ին և կտևի մինչև հոկտեմբերի 24-ը:

Որպես թողարկման կազմակերպիչ, տեղաբաշխող և հաշվարկային բանկ հանդես է գալիս «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն:

Բաժնետոմսերի ազդագիրը կարելի է ձեռք բերել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի կամ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի գրասենյակներից՝ թղթային կրիչով, ինչպես նաև վերջիններիս էլեկտրոնային կայքերից՝ համապատասխանաբար www.artsakhhpp.com և www.armswissbank.am: